

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍԻՏՈՒՏ

## ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱԻՏ ԵՐՎԱՆԴԻ

ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ԴԱՇՆԱՄՈՒՐԱՅԻՆ ՇԱՐՔԵՐԸ  
(1960-1980-ական թվականներ)

ԺԷ.00.02 - «Երաժշտական արվեստ» մասնագիտությամբ  
արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության

### ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2019

---

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ИСКУССТВ

**МАРГАРЯН АНАИТ ЕРВАНДОВНА**

ФОРТЕПИАННЫЕ ЦИКЛЫ АРМЯНСКИХ КОМПОЗИТОРОВ  
(1960-1980-е годы)

### ԱՎՏՈՐԵՓԵՐԱՏ

диссертации на соискание ученой степени  
кандидата искусствоведения по специальности  
17.00.02 – “Музыкальное искусство”

ЕРЕВАН – 2019

**Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում:**

**Գիտական դեկավար՝**

**արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր**

**ԱՍՍՏՐՅԱՆ Աննա Գրիգորի**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝**

**արվեստագիտության դոկտոր**

**ՌՈՒԽԿՅԱՆ Մարգարիտա Աշոտի**

**արվեստագիտության թեկնածու**

**ՏԻԳՐԱՆԵԱՆ Մարիաննա Ալբերտի**

**Առաջատար կազմակերպություն՝ Խ.Արովյանի անվան հայկական պետական**

**մանկավարժական համալսարան**

**Պաշտպանությունը կայանալու է 2019թ. հոկտեմբերի 31-ին, ժամը՝ 14.00-ին,**  
**ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի 016 Արվեստագիտության մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ Երևան, 0019, Մաշշալ Բաղրամյան պողոտա  
24/4):**

**Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գրադարանում:**

**Մերժմագիրն առաքված է 2019թ. սեպտեմբերի 17-ին:**

**Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝**

**Ասատրյան Ա.Գ.**

---

Тема диссертации утверждена в Ереванской государственной консерватории имени Комитаса.

Научный руководитель –

доктор искусствоведения, профессор

**ԱՍԱՏՐՅԱՆ Աննա Գրիգորьевна**

Официальные оппоненты –

доктор искусствоведения

**ՐՈՒԽԿՅԱՆ Մարգարита Աշոտովնա**

кандидат искусствоведения

**ՏԻԳՐԱՆՅԱՆ Մարիաննա Ալբերտովնա**

Ведущая организация –

Армянский государственный педагогический

университет им. Хачатура Абовяна

Защита диссертации состоится 31-го октября 2019г. в 14.00 часов на заседании специализированного совета 016 Искусствоведение ВАК РА, действующего в Институте искусств НАН РА (адрес: Ереван, 0019, проспект Маршала Баграмяна 24/4).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института искусств НАН РА.

Автореферат разослан 17-го сентября 2019г.

Ученый секретарь специализированного совета,

доктор искусствоведения, профессор

**Ասատրյան Ա.Գ.**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը:** 20-րդ դարի երկրորդ կեսը հայ երաժշտարվեստի համար բացահայտումներով և նորարարություններով լեցուն, նոր ու տարրեր ուղղություններում և ոճերում ստեղծագործելու ժամանակաշրջան էր: Ակսած 1960-ականներից՝ հայ կոմպոզիտորներից ոմանց մտածողության մեջ տեղի ունեցավ մեծ շրջադարձ: Հայ կոմպոզիտորների արվեստը սկսեց զարգանալ նոր ուղղով: Ժամանակակից կոմպոզիտորական տեխնիկաների և հայ ժողովրդական երաժշտության սինթեզը տվեց նոր որակ, ինչի շնորհիվ այսօր ունենք հայ կոմպոզիտորների մեծ քանակությամբ իետաքրքիր և ինքնատիպ ստեղծագործություններ:

Սույն աշխատությունում անդրադարձ է արվել 1960-1980-ական թվականներին ստեղծված, կոմպոզիտորական մտահղացման տեսանկյունից առավել հետաքրքիր և հատկանշական դաշնամուրային շարքերին, բացահայտվել են այդ գործերին բնորոշ կարևորագույն հատկանիշները:

Անհրաժեշտ է նշել այն մեծ հաջողություններն ու ձեռքբերումները, որոնց հասել են հայ կոմպոզիտորները կամերային երաժշտության այդ բարդ ժանրում ստեղծագործելիս: 19-րդ դարի երկրորդ կեսին հայկական դաշնամուրային շարքերը գիտական ստեղծվում էին հասարակ պարային-երգային եղանակների հիման վրա և աչքի ընկնում թափանցիկ ֆակտությունվ, որմանտիկական շնչով: 1940-ականներին և ընդիուպ մինչև 1960-ականների սկիզբը հայ կոմպոզիտորների դաշնամուրային շարքերից շատերն ունեն ազգային հիմք: Կոմպոզիտորները դիմում էին ազգային մերերիների մեջբերումների կամ գրում մերեկիներ ազգային երգերի ու պարերի ոճով: 1970-ականների սկզբում ուղիղ մեջբերումներին (ժանրային, դրամատիկական կամ ոռմանտիկական) փոխարինում է ազգային երաժշտական նյութը՝ ծևավորված ժամանակի շնչին համահունչ ոճավորմամբ: Վերջինն կարելի է բնորոշել որպես անցում ժանրային հստակ կերպարայնությունից էմոցիոնալ, ընդհանրացված տեսակի: Ավելացու է դառնում ազգային մերսի գործիքավորումը. երգայնությանը փոխարինում է աշուղական ոգով զարգացող, մշակվող ազգային իմպրովիզացիան: 1980-ականների սկզբին դաշնամուրային շարքերում տեսնում ենք ազգային ինտոնացիաների ինտելեկտուալ վերահմատավորում, ազգային ֆոլկորի հնագոյն շերտերի ինքնատիպ, արխայիկ ոճավորումներ: Հայկական ժողովրդական երաժշտության լադաստեղծման օրինաչափությունների հիման վրա ստեղծվում են մի շարք նոր լադեր, նոր հնչյունաշարեր:

**Աստեղախոսության նպատակն է՝** 20-րդ դարի երկրորդ կեսում՝ 1960-1980-ական թվականներին ստեղծված, կոմպոզիտորական մտահղացման տեսանկյունից առավել հետաքրքիր և հատկանշական դաշնամուրային շարքերի համակողմանի ուսումնասիրությունը: Կարևորվել են հետևյալ խնդիրները՝

➤ Ուսումնասիրել հայ կոմպոզիտորների դաշնամուրային շարքերի եվրոպականացման գործընթացը, որն անհնարին կիխներ պատկերացնել առանց ազգային երաժշտության հետ սերտ կապի:

➤ Ցույց տալ ժանրի էվոլյուցիան երեսուն տարվա կտրվածքով,

համակողմանի ուսումնասիրել հայ կոմպոզիտորների դաշնամուրային շարքերն ու դրանց զարգացման միտումները:

➤ Ուսումնասիրել դաշնամուրային շարքերի ոճային առանձնահատկությունները:

➤ Բացահայտել դաշնամուրային շարքերի կատարողական դերն ու նշանակությունն ուսումնական պրակտիկայում և համերգային գործունեության մեջ, դիտարկել պիեսները կատարողական տեսանկյունից:

➤ Գիտական շրջանառության մեջ դնել կոմպոզիտորների վկայություններ, մեկնաբանություններ, որոնք կօգնեն կատարողին խորապես հասկանալու ստեղծագործության կառուցվածքը, նախապատմությունը և առանձնահատկությունները:

**Թեմայի մշակվածության աստիճանը:** Հայ ժամանակակից դաշնամուրային երաժշտությունը միշտ եղել է հայ երաժշտագետների, այդ թվում Գ.Գյուղակյանի, Ռ.Աթայանի, Մ.Տեր-Սիմոնյանի, Ս.Ամատոնու, Ս.Թաշյանի, Մ.Ռուփելյանի, Ս.Սարգսյանի, Շ.Ավոյանի, Ի.Զոլոտավայի, Ա.Գրիգորյանի և այլոց ուշադրության կենտրոնում: Այդուհանդերձ, մինչ օրս առանձին ուսումնասիրության առարկա չեն դարձել 1960-1980-ական թվականների հայ կոմպոզիտորների դաշնամուրային շարքերը:

**Աշխատանքի գիտական նորույթը:** Ատենախոսության մեջ առաջին անգամ՝

➤ ուսումնասիրվել են 1960-80-ական թվականներին գրված հայ կոմպոզիտորների ընտրյալ դաշնամուրային շարքերը,

➤ սահմանվել են դրանց ժանրային և ոճական բնութագրերը,

➤ բացահայտվել են դաշնամուրային երկերի երաժշտական լեզվի և ձևակառուցման առանձնահատկությունները,

➤ բացահայտվել է հայ կոմպոզիտորների՝ դաշնամուրի միջոցով գունեղ կերպարների և տեսարանների, ինքնատիհ կոլորիտի ստեղման ծիրճը,

➤ ուշադրություն է դարձվել ստեղծագործությունների տեսական առանձնահատկություններին,

➤ ուսումնասիրվել է մետրադիթմական կազմակերպումը, ֆակտուրան:

Ուսումնասիրության համար **նյութ** են ծառայել 1960-1980-ական թվականներին ստեղծված, կոմպոզիտորական մտահղացման տեսանկյունից առավել հետաքրքր և հատկանշական դաշնամուրային շարքերը, այդ թվում՝ Առնո Բաբաջանյանի «Վեց պատկեր» (1965թ.), Գագիկ Հովոնցի «Տաներկու պրելյուդ» (1966թ.) և «Տասը պիես մոնոզրամ» (1989թ.), Արամ Սարգսյանի «Երեք պիես» (1966թ.) և «Վեց բազատել» (1986թ.), Հրայր Մելիքյանի «Հեքիաթների աշխարհում» (1970թ.), Գեղոնի Չթշյանի «Հայկական խորաքանդակներ» (1972թ.), Լևոն Զառուշյանի «Յոթ պրելյուդ» (1973թ.), Ռուբեն Սարգսյանի «Հայկական գրաֆիկա» (1973թ.) և Ալեքսանդր Հարությունյանի «Վեց տրամադրություն» (1976թ.) շարքերի նոտաները, կատարումների ձախնագրություններն ու տեսագրությունները, ստեղծագործությունների հեղինակներին նվիրված աղբյուրները, երաժշտատեսական ուսումնասիրությունները:

**Հետազոտության գործնական նշանակությունը:** Ուսումնասիրության

արդյունքները մի կողմից՝ անհրաժեշտ քայլ կրառնան հայ երաժշտության պատմության շարադրման ճանապարհին և կարող են ընդգրկվել բուհական համապատասխան դասընթացներում, մյուս կողմից՝ եակենտ կրառնան հայ կոմպոզիտորների մյուս դաշնամուրային շարքերի ուսումնասիրության համար:

**Աստենախոսության փորձաքննությունը:** Աստենախոսությունը քննարկվել և հրապարակյան պաշտպանության է երաժխավորվել Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի կատարողական արվեստի պատմության, տեսության և մանկավարժության ամբիոնի 2013թ. հունիսի 27-ի նիստում: Աշխատանքի հիմնական դրույթները գեկուցվել են <<ԳԱԱ Արվեստի ինստիտուտի Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական հինգերորդ (Երևան, 2-3 դեկտեմբերի, 2010թ.), Վեցերորդ (Երևան-Արգական, 26-27 նոյեմբերի, 2011թ.), յոթերորդ (Երևան, 19-21 հոկտեմբերի, 2012թ.), իններորդ (Երևան, 14 նոյեմբերի, 2014թ.) և տասներորդ (10-11 նոյեմբերի, 2015թ.) նատաշրջաններում, հրատարակվել նստաշրջանների նյութերի ժողովածուներում և Երևանում լրյու տեսնող գիտական պարբերականներում:

**Աշխատության կառուցվածքը:** Աստենախոսությունը բաղկացած է Ներածովյունից, Երեք գլուխներից (Գլուխ Առաջին՝ «1960-ական թվականներ», Գլուխ Երկրորդ՝ «1970-ական թվականներ», Գլուխ Երրորդ՝ «1980-ական թվականներ»), Եղրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորված է աստենախոսության թեմայի արդիականությունը, նշված են նպատակն ու խնդիրները, գնահատված է ուսումնասիրվող թեմայի գիտական մշակվածության աստիճանը, ներկայացված է գրականության տեսությունը, շեշտված է աշխատության գիտական նորոյելը:

### ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

#### 1960-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

##### 1.1. Առն Բաբաջանյան. «Վեց պատկեր»

Ժերևս, Ա.Բաբաջանյանի «Վեց պատկեր» դաշնամուրային շարքի (1964) ամենագեղարվեստական բնորոշումը պատկանում է ստեղծագործության լավագույն մենարաններից մեկին՝ Սվետուանա Նավասարդյանին. «Կոնստրուկտիվ սիստեմով գրված, խիստ բանական, ազգային առողմով անդեմ գործերն այնքան հայկական էին՝ հեթանոսական շնչով լեցուն «Սասունցիների պար»-ով, «Ժողովրդական»-ով, «գուանական»՝ «հմարովիզացիա»-ով, «Խորալ»-ով... Եվրոպական համակարգի չոր ու ցամաք անապատում իսկ ծիլ էր տվել Բաբաջանյանի ոգին, բաբաջանյանական հանճարը»<sup>1</sup>:

Վեց պատկերից չորսում («Ժողովրդական», «Ինտերմեցցո», «Խորալ» և

<sup>1</sup> Նավասարդյան Ա., Հողմով բերված մի հատիկ էր, որից վեր խոյացավ արդի հայ երաժշտության կենաց ծառը..., «Առավոտ» օրաթերթ, Երևան, 24 հունվարի, 2014:

«Սասունցիների պար») կիրառվում է տասներկու տոնից բաղկացած դոդեկաֆոն տեխնիկա, սակայն հաճախ այստեղ ոչ թե տասներկու հնչյուն է, այլ ավելի քիչ: Ա.Բարաջանյանի սերիան քիչ ընդհանրություն ունի Ա.Շյոնքերգի կամ Ա.Վերենի տիպիկ ատոնալ սերիայի հետ: Կոմպոզիտորն իրեն չի սահմանափակում՝ օգտագործելով միայն ընտրյալ հնչյուններ ընտրված հերթականությամբ: Նա դրանք տեղաշարժում է, երեմն կորում է հնչյունաշարի ոչ պետքական հատվածները կամ հակառակը. ընտրյալ հնչյունաշարը հարստացնում է նոր տոներով՝ որևէ ինտոնացիա կամ անհրաժեշտ հարմոնիկ ֆունկցիա ընդգծելու համար: Դոդեկաֆոնիայի տեխնիկայով կառուցելով սեփական կոնցեպցիան՝ Ա.Բարաջանյանը չի տրվում սերիայի գրավչությանը, ավելին՝ սերիան ներկայացնում է գրուեսկային, ծաղրական ձևով: Լինելով իրապես ազատ արվեստագետ, Ա.Բարաջանյանը դուրս է գալիս հակամարտություն ընդդեմ «համակարգի»:

«Վեց պատկեր» շարքում առկա են հայ ժողովրդական երաժշտության լադաստեղծման օրինաչփություններից շատերը: Կոմպոզիտորը շարքի մի քանի պատկերներում օգտագործում է բարդացված հնչյունաշար, որն, ըստ Էլոյյան, հնչյունաշարի որոշ հատվածների մի օկտավից մյուս օկտավ տեղափոխման արդյունքն է: Տեղափոխության ենթարկվելով՝ երաժշտական հատվածները միահյուսվում են բնական հնչյունաշարի համապատասխան հատվածներին և դրանց հնչյունային կազմի մեջ ներմուծում բարդացում:

Ա.Բարաջանյանն իր առջև հստակ կերպարային խնդիր լուծելու նպատակ է դնում. կոնստրուկտուային երաժշտական պատկերները ստեղծել գուսապ արտահայտչամիջոցների կիրառմամբ, առանց ճոխության, առանց նյուանային նրբագեղության՝ հղվելով Կոմիտասի դաշնամուրային մանրանվագներին: Այստեղից էլ երաժշտական լեզվի յորահատուկ արտահայտչականությունը, որը դրսւուրվում է հետևյալում՝

1. «Խորար»-ից բացի՝ մանրանվագները գլխավորապես երկճայն են, որոշ պիեսներում հանդիպում ենք միաձայն ֆակտուրա, որը, համադրվում է արտահայտիչ քողարկված պոլիֆոնիայով, միևնույն ժամանակ՝ ծայներից յուրաքանչյուրին բնորոշ է շարժման հստակություն:

2. Մեկ տեսակի արտահայտչամիջոցների խտացված օգտագործում. խոսքն ինտոնացիոն առումով արտահայտիչ մեղեդայնության, ակտիվ օիթմի, օստինատուային զարգացման մեթոդների մասին է: Միևնույն ժամանակ՝ Ա.Բարաջանյանը հրաժարվում է գունանկարչական, հարուստ հարմոնիայից և երաժշտական հյուսվածքի բազմաձայն կառուցվածքից:

3. Կոնստրուկտիվ մեթոդների կիրառում, որոնք փոխկապակցված են դոդեկաֆոնիայի տարրերի հետ:

«Վեց պատկեր» շարքը փաստում է, որ Ա.Բարաջանյանը ժամանակի

<sup>2</sup> Зурабян Ж. Национальное своеобразие тематизма в армянской симфонической музыке первых послевоенных лет, Диссертация на соискание учёной степени кандидата искусствоведения, Ереван, 1983, стр. 178.

ամենավաշ, ամենանորարար և ամենաառաջադիմ կոմպոզիտորներից է: Շարքում ոչ միայն հրաշալի համադրվում են հայ ժողովրդական երաժշտության առանձնահատկություններն ու 20-րդ դարի երաժշտության մի շարք հնարքներ, այլև հստակ ընդգծվում են վերջինիս զարգացման ուղիները:

## 1.2. Գագիկ Հովոնց. «Տասներկու պրեյուտ»

Գագիկ Հովոնցի դաշնամուրային առաջին ստեղծագրծությունը «Տասներկու պրեյուտ» շարքն է (օր. 2, 1965թ.), որն առաջին անգամ հնչել է 1965 թվականին՝ լուս տեսնելուց կարճ ժամանակ անց: Վեց պիեսը կատարել է Ամայա Բայրությանը, մյուս վեցը՝ Կետոտի Մալխասյանը «Անդրկովկասյան գարուն» փառատոնի ժամանակ: 1966թ. մայիսի 10-ին երիտասարդ կոմպոզիտորների չորրորդ համագումարի ժամանակ «Տասներկու պրեյուտ» շարքը հնչել է ամբողջությամբ: Շարքը նվիրված է Կ.Մալխասյանին՝ Կարպատական հոմբակի տիկնոջը:

Յուրաքանչյուր պրեյուտ ուրոյն կերպարային մտածելակերպի դրսևուրում է, ներքին դրամատուրգիա ունեցող մանրանվագ: Բնույթով պրեյուտները շատ տարբեր են՝ քնարադրեգականից մինչև պարերգային:

Այն, որ պրեյուտ ժանրը կրմագիտորական փորձարարության համար հրաշալի «լաբորատորիա» է, նորույթ չէ: Ենց այս շարքում է Գ.Հովոնցը բյուրեղացնում իր երաժշտական լեզուն և ոճը, իր կոնստրուկտիվ հայտնագրծությունները: Նա փորձարկումներ է անում մեղեդայնության, հարմոնիայի, լադի, տեմբրի, ֆակտուրայի հետ: Այստեղ առաջին անգամ նկատելի են դառնում Գ.Հովոնցի լադահարմոնիկ համակարգերի նախանշանները: Նա հեռանում է ավանդական մաժոր-մինորային համակարգերից: Պրեյուտներից ոչ մեկում չենք հանդիպում ալտերացիայի նշանների, որոնք նշում են այս կամ այն տոնայնությունը: Կոմպոզիտորը տոնայնությունն ուրվագծում է ընդհանրական՝ ստեղծելով «հնտոնացին կենտրոն»:

Պ.Հինդեմիտի «Ludus tonalis» շարքին բնորոշ այդ առանձնահատկություններն առկա են նաև Գ.Հովոնցի ստեղծագրություններում: Դա ցայտուն դրսւորվում է նաև «Տասներկու պրեյուտ» շարքում: Տարբերությունը միայն տոնայնությունների դասավորության մեջ է: Եթե Պ.Հինդեմիտի մոտ շարքը գրված է գլխավորապես Դո (C) տոնայնությունում, որին ենթարկվում են մյուս բոլոր տոնայնությունները՝ դասավորվելով ըստ տոնայնական ազգակցության, ապա Գ.Հովոնցի մոտ տոնայնությունների հաջորդականության նման համակարգը, պիեսների միջև դրամատուրգիական կամ կոնստրուկտիվ կազմը բացակայում է: Կոմպոզիտորը մանրանվագները գրում է քրոմատիկ հնչյունաշարի բոլոր տոներից: Ըստրելով շարքը կառուցելու այդ մեթոդը՝ Գ.Հովոնցն ընդգծում է յուրաքանչյուր մանրանվագի գունային, տեմբրային գունապնակը:

Լադատոնային ոլորտների քառասային խմբում է նա տեսնում տրամաբանություն, պատահականության գեղագիտության հմայք: Տոնայնությունների հաջորդականությունը հետևյան է: In G, in C, in Dis, in Fis, in B, in Cis, in H, in D, in Gis, in E, in A, in F:

Թեև «Տասներկու պրեյուտ» շարքը Գ.Հովոնցի առաջին ստեղծագրություններից է, սակայն կարևոր դեր է կատարել կոմպոզիտորի ստեղծագոր-

ծական էվլոյուցիայում. այստեղ նախանշվել են ձևակառուցողական մի շարք մոտեցումներ, զարգացման հիմարքներ, որոնք հետագայում դարձել են կոմպոզիտորի ստեղծագործությունների բնորոշիչներից:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ 1970-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

### 2.1. Գեղոնի Չթյան. «Հայկական խորաքանդակներ»

«Հայկական խորաքանդակներ» շարքը Գեղոնի Չթյանի դաշնամուրային արվեստի, թերևս, ամենավառ նմուշն է: 1972 թվականին գրված շարքը Հայաստանի բանաստեղծական կերպարներից կազմված գեղանկարչական ալբոմ է, որտեղ կոմպոզիտորը պատկերում է Հայաստան աշխարհը: Պիեսներում կան դրվագներ ինչպես հնագույն, այնպես էլ մերօրյա Հայաստանի կյանքից: Հեղինակը համատեղում է հայկական ճարտարապետական կոթողի պատկերումը և հայ մարդու կերպարն ու կենցաղը:

Շարքը լույս է տեսել Հայաստանում, Շվեյցարիայում և Ռուսաստանում, կատարվել է Հայաստանի տարբեր քաղաքներում, Փարիզում, Մոսկվայում, Ժրիլիստում, Տաջբենդում: Ստեղծագործությունը նվիրված է խորհրդային անվանի դաշնակահար Աննա Ամբակույանին, ում կատարմամբ էլ հնչել է առաջին անգամ: Շարքի վերջին ուշագրավ կատարումները պատկանում են Հայկ Մելիքյանին և Ֆրանսարևակ Սոֆյա Մելիքյանին:

Շարքը բաղկացած է ինգ ճկուն, էքսարենսիվ և կոլորիտային մանրանվագներից՝ «Այրիվանք», «Կապուտայա», «Լեռնեցիների պար», «Խաջարեր», «Խաղողի տոն»: Ստեղծագործությունն աչքի է ընկնում երաժշտական հյուսվածքի գունեղությամբ, կերպարայնությամբ: Յուրաքանչյուր մանրանվագ հյուգեղ, վառ երանեների օգտագործմամբ արված ինքնատիպ կտավ է: Գ. Չթյանն այս շարքում հիացնում է տեսողական տպավորությունները փոխանցելու իր մեջ տաղանդով: «Երաժշտություն ես լսում, և ասես թերթում ես Հայաստանի բնության գեղեցկությունը պատկերող ալբոմ, որտեղ պատկերված են մեր տաճարները, իսկ դրանց պատերին փորագրված են զարմանահրաշ խորաքանդակներ: Քանի անգամներ ենք մենք կանգ առել դրանց առջև Զվարթնոցում, Գեղարդավանքում, Նորավանքում կամ Պտղնիում...», - գրում է Մ. Ռուխկյանը<sup>3</sup>:

Հայկական խորաքանդակներ»-ում սկզբունքային նորարարություն է հեղինակի ինսունացիոն լեզուն: «Գ. Չթյանը դիմում է կոլորիտական կերպարայնությանը, ձգտում է հարստացնել երաժշտական հյուսվածքը թարմ, վառ գույներով», - նկատել է Ա. Գրիգորյանը<sup>4</sup>:

«Հայկական խորաքանդակներ»-ը անցյալ դարի երկրորդ կեսում ստեղծված ամենավառ և տիպիկ դաշնամուրային շարքերից է:

<sup>3</sup> **Рухкян М.** Властное обаяние женщины, “Голос Армении”, Ереван, 23 мая, 2018.

<sup>4</sup> **Григорян А.** Искренность чувства, “Советская музыка”, Ереван, № 8, 1982, стр. 293.

## 2.2. Հրայքա Մելիքյան. «Հերիաթների աշխարհում»

XX դարի երկրորդ կեսին ստեղծված հայ կոմպոզիտորների դաշնամուրային շարքերի ցանկում առանձնահատուկ տեղ է գրաղեցնում Հրայքա Մելիքյանի «Հերիաթների աշխարհում» ծավալուն դաշնամուրային շարքը: Ստեղծագործությունը հազվադեպ է կատարվում, երաժշտագիտական անդրադարձերն ել հպանցիկ են ու եզակի:

Կոմպոզիտորը շարքը գրել է Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում՝ Է. Միրզոյանի դասարանում ուսանելու տարիներին (1967-1972թ.): այն նոր խոսք էր հայ երաժշտական իրականության համար:

Հերինակը վարպետորեն սինթեզով է հայ երաժշտությանը բնորոշ օրինաչափություններն ու 20-րդ դարի երկրորդ կեսին բնորոշ կոմպոզիտորական տեխնիկաները և մտահղացումները: Նորարարության և ժամանակի համար անսովոր տեխնիկական հնարքների կիրառման հետ մեկտեղ, գործն օժտված է գեղարվեստական անկերծությամբ և անմիջականությամբ:

Ստեղծագործությունում առկա են Հ. Մելիքյանի արվեստի բնորոշ մի շարք գծեր: Խոսքը երաժշտական նյութի իմպրովիզայնության, երաժշտական հյուսվածքի թափանցիկության, պոլիֆոնիկ գրեատի, գծային տեխնիկայի առկայության, մետրական շեշտերի փոփոխականության, ասիմետրիկ որթմերի օգտագործման մասին է:

Շարքը բաղկացած է կառուցվածքով համաշափ երկու տետրից. յուրաքանչյուրում տասներկու պիտի է: Կոմպոզիտորը շարքը կառուցվում է գեղարվեստարտահայտչական և տեխնիկական խնդիրների աճի սկզբունքով: Պիեսներից յուրաքանչյուրում առկա է ամբողջական քնարական կերպար կամ տրամադրություն:

Գործը նվիրված է ստեղծագործության առաջին կատարողին՝ հայ անվանի դաշնակահար Սվետլանա Նավասարդյանին: Առաջին հայացքի կարող է թվական, որ շարքի վերնագիրը չի բխում բովանդակությունից, քանի որ այստեղ չկա ընդունված պատկերացումներին համապատասխանող հերիաթայնություն: Երաժշտությունը չի բնութագրում հերիաթային կերպարների, կամ չի արտացոլում հերիաթային հետաքրքրաշարժ սյուժե:

Յուրաքանչյուր պիեսում գետեղված է ինքնուրույն և ամբողջական գեղարվեստական կերպար, յուրաքանչյուր մանրանվագի նախորդում է բնարան: Ամբողջ շարքը նույնական ունի ընդհանուր բնարան. «Ես նրբորեն ներիյուառում էի մանուշակի և լուսի շոնչը հանգերի հնչյունների մեջ»<sup>5</sup>, որի հեղինակը Ֆրանչեսկո Պետրարկան է: Շարքի մյուս պիեսների բնարանների հեղինակներն են Ա. Պուչկինը, Ա. Բրյուկը, Ս. Եսենինը, Ավ. Իսահակյանը, նաև կոմպոզիտոր՝ Հ. Մելիքյանը: Բնարանները գիշավորապես բանաստեղծական տողեր են տարբեր ստեղծագործություններից: Սակայն պետք է նշել, որ բնարանները շարքը չեն դարձնում ծրագրային, դրանց օգնությամբ կոմպոզիտորը հուշում է կատարողներին և հետազոտողներին, թե կերպարային ոլորտի բացահայտ-

<sup>5</sup> “Там в звуки рифм вплетал я нежного фиалки вздох и лунный свет”. Մելիքյան Հ., «Հերիաթների աշխարհում» 24 դաշնամուրային պիտի, Երևան, 1976, էջ 3:

ման ընթացքում ի՞նչ ուղղությամբ է պետք մտածել: Քանի որ շարքը ծրագրային չէ, ուստի ընդունելի է յուրաքանչյուր պիեսի կամ պիեսների մի խմբի առանձին կատարում կամ դրանց տեղերով փոփոխում:

Շարքն առավել կուռ կառուց դարձնելու և գործը «շարք» կոչելու առիթ ընձեռող երևոյթներից մեկն այստեղ առկա կամարածն կապն է: Առաջին տեսրակի առաջին պիեսի թեմատիզմը որոշակիորեն լսելի է և՝ առաջին, և՝ երկրորդ տեսրակի վերջին պիեսներում: ՈՒթրմախնտոնացին կապն այդ մանրանվագներում ակնհայտ է:

Ձևի օրգագաման արդյունավետ միջոցներից մեկը կազմավորված և ավարտուն թեմատիկ միտք չարտահայտող երաժշտական կարճ դարձվածքների մետրատիթմիկ վարիացիաներն են: Դարձվածքները գլխավորապես դիատոնիկ կամ քրոմատիկ պարզագույն գոյացություններ են: Նման երևոյթի կարելի է հանդիպել առաջին տեսրից՝ առաջին, վեցերորդ, յոթերորդ, իններորդ, տասներորդ և երկրորդ տեսրից՝ առաջին, երկրորդ, երրորդ, ութերորդ և տասնմեկերորդ մանրանվագներում:

Անդրադառնալով շարքում առկա ազգային երաժշտության կոլորիտին՝ պետք է նշել, որ առաջին տեսրակի՝ տասնմերորդ և երկրորդ տեսրակի՝ չորրորդ պիեսում լսելի են հայկական ազգային երաժշտության ինտոնացիաներ: Առավելագույնս ազգայինն առկա է առաջին տեսրի վեցերորդ և իններորդ պիեսներում: Վեցերորդ պիեսում <Մելիքյանը ստեղծում> է կովկասյան ժողովուրդների ազգային նվազարանի՝ քանոնի հնչողություն, իսկ իններորդ պիեսում կարելի է լսել նմանակում շվիի հնչողությանը: Այլ պիեսներում, որտեղ չեն լսվում ազգային երաժշտությանը բնորոշ ինտոնացիաներ, <Մելիքյանն օգտագործում է հայ ժողովրդական երաժշտությանը բնորոշ տարբեր արտահայտչածներ. դրանք են ազատ վարիացիոն մեթոդները, ասերգայնությունը, հայ երաժշտությանը բնորոշ ոիթմիկան, որն արտահայտվում է կրկնանվագների, տրեմոլոնների, սինկոպանների շրայմամբ: Մի շարք պիեսներում նմանակում են տարբեր տեմբրեր՝ զանգակի հնչողությունը տեմբրային գուգորդումների ամենավայր օրինակն է: Այն առկա է առաջին տեսրակից՝ յոթերորդ և երկրորդ տեսրակից հինգերորդ և վեցերորդ պիեսներում: Առաջին տեսրակից տասներկությունը պիեսում՝ ձախ ձեռքում նմանակվում են թմրուկի հարվածները:

20-րդ դարի երաժշտարվեստի համար համեմատաբար նոր երևոյթներից է տարբեր թեմաներով պոլիֆոնիան: Այդպիսի պոլիֆոնիան նշմարվում է երկրորդ տեսրակի երկրորդ և իններորդ պիեսներում: 20-րդ դարի երաժշտությանը բնորոշ գծային թեմատիզմին ձգտումը նույնպես բնորոշ է «Հեքիաթների աշխարհում» շարքին:

### 2.3. Լևոն Չառուշյան. «Յոթ պրեյսուր դաշնամուրի համար»

Կոմպոզիտորներից մեկն, ում երաժշտակարենտիկական կայացումը համընկավ 20-րդ դարի երկրորդ կեսում (հատկապես 1960-1980թթ.) տեղի

ունեցող շրջադարձային փոփի հետ<sup>6</sup>, ՀԱՊՆ Զառչյանն է: Նա իր սերնդակից կոմպոզիտորներից շատերի նման նոյնպես փնտրում էր իր յուրօրինակ երաժշտական ոճը, սեփական լեզվամտածորությունն ու ուժին: Ուրի, որն անցնելու համար պետք էր վերահմաստավորել և սինթեզել դասականն ու նորագույնը: Ասվածի վառ օրինակներից է «Յոթ պրեյուդ դաշնամուրի համար» շարքը:

Ստեղծագործությունը գրվել է 1973 թվականին և կոմպոզիտորի՝ պրեյուդ ժանրում ստեղծագործելու առաջին փորձն է: Ի սկզբանե Լ. Զառչյանը ունեցել է մի քանի պրեյուդ գրելու մտադրություն: Հեղինակի համար կարևոր էր այդ պահին արտահայտել ինքնարուիս ծնվող երաժշտությունը, միայն ավելի ոչ՝ հրատարակության պատրաստելիս Լ. Զառչյանը պրեյուդները որոշել է միավորվել և գործը հանձնել է տպարան դաշնամուրային շարքի տեսքով: Շարքը լույս է տեսել Երևանում (1977թ.) և Մոսկվայում (1979թ.):

Պրեյուդները գրելիս՝ Լ. Զառչյանը սովորում էր Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ասպիրանտուրայի ավարտական կուրսում կոմպոզիցիայի բաժնում Էնվարդ Միրզյանի դասարանում: Դաշնամուրային ֆակուլտետը նա ավարտել էր 1970 թվականին՝ ուսանելով Գեղրգի Սարաջնի դասարանում<sup>7</sup>:

Պրեյուդները դաշնամուրային (ափանխտիկ) են: Կոմպոզիտորը դրանք գրել է՝ հաշվի առնելով դաշնամուրի տեխնիկան և հնյունային հնարավորությունները: Ստեղծագործությունը կատարելիս՝ Լ. Զառչյանը հնարավորություն է ընձեռում կատարողին ներկայանալ և՝ որպես քնարերգու, և՝ որպես վիրտուոզ, փայլուն դաշնակահար: Ափանխտիկ՝ Լ. Զառչյանի արվեստին բնորոշ են «կոնցերտայնությունը, բարձր ծայներանգը, փայլը և ոգեշնչվածությունը»<sup>8</sup>:

Այդ հատկանիշները, բնական է, պայմանավորված են Լ. Զառչյանի՝ նաև դաշնակահար լինելու հանգամանքով: Նրա կարծիքով՝ ցանկալի է, որ յուրաքանչյուր պրոֆեսիոնալ կոմպոզիտոր տիրապետի դաշնամուրին:

Ժեն շարքն ամբողջական է և միավորված է ընդհանուր տրամաբանությամբ, սակայն պիեսներից յուրաքանչյուրը կոմպոզիտորի աշխարհայացքի մի դրսերումն է: Մանրանվագներից յուրաքանչյուրն անհատական է և կերպարային մի ոլորտ է արտահայտում<sup>9</sup>: Պրեյուդներին բնորոշ է ներքին զայվածությունը, ինչը վարպետորեն համատեղվում է զգացմունքների խորության, ներքին լարվածության հետ: Լ. Զառչյանն օգտագործում է կոմպոզիցիոն այնպիսի հնարքներ, ինչպիսիք են պոլիհարմոնիան, պոլիտոնալությունը, օստի-

<sup>6</sup> Саркисян С. Вопросы современной армянской музыки (60-е годы), Ереван, 1983, стр. 20.

<sup>7</sup> Рухян М. Линия жизни Левона Чаушяна. К 70-летию композитора, “Голос Армении”, 2016. <http://golosarmenii.am/article/40412/liniya-zhizni-levona-chaushyana>

<sup>8</sup> Տէ՛ս Արևշատյան Ա. Լевон Чаушян. Музыка республик Закавказья, Тбилиси, 1975, стр. 155-160.

<sup>9</sup> Զաղացպանյան Կ., Ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում, «Հայաստան այսօր», № 2, 1987, էջ 22-23:

նատ-բասը և օստինատ-ֆիգուրացիաները: Բացի այդ՝ երաժշտությանը լրացուցիչ դինամիզմ են հաղորդում կվարտա-կվինտային ինտերվալների փոխհարաբերությունները գծային հորիզոնական պլանով:

Միևնույն ժամանակ՝ պրելյուդներում Լ.Չառուշանը չի հեռանում դասական որոշ ավանդույթներից: Ձևի ամբողջականությունը և թեմատիկ նյութի զարգացման ոճը հնարավորություն են տալիս յուրաքանչյուր պրելյուդ մեկնաբանել որպես եռամաս կոմպոզիցիա:

Պրելյուդներին բնորոշ ռիթմական հստակ պատկերը և մոտորային բնույթը ստեղծագործությանը տալիս են մեծ գրավչություն: Շարքի դինամիզմ համարներում (1, 3, 5, 7), որտեղ կոմպոզիտորը կարևորում է գործիքի կատարողական տեխնիկայի դրսւորումը, պրելյուդներին բնորոշ ազգային կոլորիտը շատ ցայտուն չի դրսւորվում, իսկ դանդաղ մասերում (2, 4, 6), հակառակը, բացահայտվում է կոմպոզիտորի քնարական շնորհը, ազգային մտածողությունը:

Ոիթմիկ գերակշռող ֆիգուրացիան տրիոյի կամ տակտի եռամաս բաժանումն է, որն առկա է յոթ պրելյուդներից հինգում: Դա հատկապես ցայտուն է երևում առաջին ու վերջին պրելյուդներում, որոնք ոչ միայն ոիթմիկ, այլև ինտոնացիոն տեսակետից շատ նման են և ստեղծում են մի տեսակ կամար՝ շրջանակելով ամբողջ շարքը: Ի դեպ, դրանցում (1, 7 պրելյուդներ) լսելի են խաչատրյանական տոլկատայնության ինտոնացիաները:

#### 2.4. Ուրիեն Սարգսյան. «Հայկական գրաֆիկա»

Ուրիեն Սարգսյան ինքնատիկ և տարանդավոր փորձարար, ով իր արվեստում միշտ ծգուել է ներդաշնակելի ժամանակակիցն ու ավանդականը: 1973-ին՝ Ռ. Սարգսյանի ստեղծագործական կայացման շրջանում, գրված «Հայկական գրաֆիկա» շարքը կոմպոզիտորի՝ մանրանվագ ժանրում առաջին փորձն է: Շարքը հրատարակվել է 1982 թվականին՝ Ռ. Սարգսյանի կազմած «Հայ կոմպոզիտորների կամերային ստեղծագործություններ» ժողովածուում, նրա դաշնամուրային թիվ 1 սոնատի հետ:

Շարքում թրծվում է կոմպոզիտորի արտահայտչակեզուն, ձևավորվում են մի շարք ստեղծագործական սկզբունքներ, որոնք հետագայում կարելի է տեսնել խոշոր կտավի գործերում: Մ. Ռուխյանի կարծիքով՝ ֆուլլորային երաժշտական մշակույթի հետ շփումն ակնհայտ է Ռ. Սարգսյանի 1970-ականների բոլոր ստեղծագործություններում, այդ թվում նաև «Հայկական գրաֆիկայում»<sup>10</sup>: Իսկ Մ. Բերկոն գտնում է, որ ինչպես «Հայկական գրաֆիկայում», այնպես էլ վաղ շրջանի մի քանի այլ գործերում ազգայինը բացահայտվում է ոչ ակնհայտ, այլ ներքին բովանդակության ընդհանուր վերարտադրման միջոցով<sup>11</sup>:

«Հայկական գրաֆիկային» անդրադառնալիս առաջին հարցը, որ ծագում է, այն է, թե ինչու է կոմպոզիտորն իր ստեղծագործությունն այդպես անվանել: Պատասխանը պարզ է: Վերնագիրը կոչված է ընդգծելու հայկական

<sup>10</sup> Рухян М. Портреты армянских композиторов, Очерки, Ереван, 2009, стр. 168.

<sup>11</sup> Берко М. Трудный и радостный путь познания, “Советская музыка”, №4, Москва, 1978, стр. 15.

գրաֆիկական մտածողությունն ու օգտագործվող գրաֆիկական արտահայտչամիջոցները:

«Հայկական գրաֆիկա» շարքին, ինչպես գրաֆիկական ցանկացած գործի, բնորոշ են մանրազնություն ու ընդգծված հետաքրքրությունը շարադրանքի հանդեպ, բնորդի մանրակրկիտ գծավորումը, առարկայի կառուցվածքի և ներքին բովանդակության բացահայտումը: «Հայկական գրաֆիկայում» Ռ. Սարգսյանը հաճախ բավարարվում է երաժշտական պատկերի հպանցիկ, անցողիկ ուրվագծմամբ, հաճախ ստեղծում է «առարկայի» պայմանական գծապատկեր, պարզաբես ակնարկում՝ ապավինելով ունկնդիրի երևակայությանը: Անապարտությունն ու լակոնիզմը շարքի գիշավոր արտահայտչածերից են: Պատահական չէ, որ պիեսները ծավալուն չեն և հաճախ ավարտվում են անորոշ տրամադրությամբ, հարցականով: Կոմպոզիտորը կերպարն ստեղծում է չշուայելով գեղարվեստական միջոցները:

Շարքը բաղկացած է իինք ոչ մեծ պիեսից, որոնցից յուրաքանչյուրը, թեև ընույթով տարրեր, սակայն գրված է ընդհանուր կերպարային և ինտոնացիոն ոլորտում: Ինչպես նշել է կոմպոզիտորը մեզ հետ ունեցած գրուցի ընթացքում, շարքի կերպարային սկզբնաբերյուրը հայկական բնույթունն է: Այնուամենայնիվ, անկախ շարքի պիեսները միավորող մի շարք գործոններից և հստակ խրագրից, «Հայկական գրաֆիկան» չի կարելի անվանել ծրագրային ստեղծագործություն: Շարքը զարգանում է որպես ծավալուն մենախոսություն: Պարբերաբար իրար են հաջորդում երաժշտական շարադրանքը, հարցերը, դրանց պատասխանները, հոգական վերելքներն ու վայրէջները:

Ռ. Սարգսյանը հրաժարվում է ավարտուն ձևերից: Փոխարենը կիրառում է ուսարիզայնության տարրերով ազատ ձևեր: Երաժշտական նյութի կառուցման համար նա օգտագործում է դոդեկաֆոն ստեղնիկայի սկզբունքներ, իսկ սերիայի շրջանակում կիրառում միկրոսերիա և պուանտիլիզմի հնարքներ: Յուրաքանչյուր պիեսի համար կոմպոզիտորն ստեղծում է նոր միկրոսերիայի օլյակներ, որոնք մշակվում են ստեղծագործության կերպարային ուղղվածության ընդհանուր հոլոնով: Դրանք ամփոփվում են շարքի ֆինալում՝ իինքերորդ պիեսում, որտեղ Ռ. Սարգսյանը հանրագումարի է բերում սերիայի հիմնական օլյակները դրանով իսկ շեշտելով շարքի ամբողջականությունը:

## 2.5. Ավերածանդր Հարությունյան. «Վեց տրամադրություն»

Ալ. Հարությունյանի ստեղծագործությունների թվում առանձնահատուկ տեղ են գրաբեցնում դաշնամուրային շարքերը: Կոմպոզիտորը շարքերին անդրադարձել է իր ստեղծագործական կյանքի տարրեր փուլերում: «Դաշնամուրային առաջին շարքը»՝ «Երեք պրելյուդ դաշնամուրի համար», կոմպոզիտորը գրել է 1938 թվականին: Երկրորդ շարքը՝ «Երաժշտական երեք պատկեր» (1960թ.), կոմպոզիտորը նվիրել է հայ դաշնամուրային դպրոցի հիմնադիրներից մեկին՝ դաշնակահար Կետիշ Մալխասյանին, իսկ երրորդ՝ «Վեց տրամադրություն» շարքը (1976թ.)՝ դաշնակահար և մանկավարժ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Վիլի Սարգսյանին, ում կատարմամբ էլ գործ հնչել է առաջին անգամ: Վերջին շարքին, ի

տարբերություն նախորդ երկուսի երաժշտագիտական անդրադարձեր գրեթե չեն եղել:

Առաջին անգամ ստեղծագործությունը հնչել է Հայֆիլիարմոնիայի Փոքր դահլիճում (Ներկայում Առն Բարաջանյան համերգասրահ): Ինչպես նշում է հեղինակն իր «Հուշերում», ստեղծագործությունը գրվել էր դաշնակահար Վիլլի Սարգսյանի նախաձեռնությամբ: «Ես միշտ բարձր եմ գնահատել այդ նույրը ու խորաթափանց դաշնակահարին և կարծում եմ նա պետք է հաճախ իր ելույթներով մեզ ուրախություն պատճառի»,- գրում է Ալ.Հարությունյանը<sup>12</sup>:

Չարքին բնորոշ են արտահայտման անմիջականությունը, անկաշկանդությունը, նրագեղությունը, պարային շարժման ճկունությունը. հատկանիշներ, որոնց հիման վրա է կերտվում Ալ.Հարությունյանի ստեղծագործական նկարագիրը<sup>13</sup>: Հուզականությունը և երաժշտական նյութի նրբաճաշակությունը գրավում են ունկնդիրին շարժի առաջին իսկ հնյունից: Վեց մանրանվագից բաղկացած շարքը կոմպոզիտորը կառուցում է հակադրության սկզբունքը. անգամ թոնիցիկ հայացք զցերով տեմպային նշումներին (Adagio, Allegro agitato, Moderato, Adagio, Moderato, Allegro energico) և երաժշտական հյուսվածքին՝ կարելի է ասել, որ կոմպոզիտորը մտադիր էր ամեն պիեսում ստեղծել յուրօհնակ, նախորդից տարբերվող և, թերևս, հակասական երաժշտական ոլորտ: Ալ.Հարությունյանի հետ ունեցած գրույցի ընթացքում կոմպոզիտորը պատմել է, որ ի սկզբանե գրել էր երկու պիեսից բաղկացած դաշնամուրային շարք և որոշել էր վերնագրել՝ «Պրելյուդ և Տոկկատ», որոնք հետազում դարձել էին «Վեց տրամադրություն» շարժի հինգերորդ և վեցերորդ համարները: Ստեղծագործությունը տպարան հանձնելուց առաջ կոմպոզիտորը որոշել էր շարքը համարել ևս երեք պիեսով, որոնց համար նոյնական վերնագրեր էր մտածել, սակայն հրատարակության հանձնելիս որոշել էր հրաժարվել ծրագրային անվանումները, քանի այդ գրել էր ևս մեկ պիես: Արդյունքում ծնվել էր «Վեց տրամադրություն» վերնագիրը կրող շարքը: Կոմպոզիտորը նշում է, որ հրաժարվել էր շարժի համարների վերնագրերից, քանի որ չէր ուզում կատարողին և ունկնդիրին թելադրել իր կերպարային ոլորտները:

Հատկանշական է, որ կոմպոզիտորը շարքում բնականոն կերպով օգտագործում է դարձվածքներ ժողովրդական ու գուանական երգերից, որոնք միաձուված են իր իսկ ստեղծած մեղեդայնությանը՝ դառնալով դրա անքակտելի մասը: Ալ.Հարությունյանի այս շարժի երաժշտությունը պայծառ է, դինամիկ, միննոյն ժամանակ՝ քնարական:

Չարքը կարևոր դեր է կատարել հայ երաժշտության մեջ մանրանվագի ժանրի զարգացման գործում և արժանի է գրավելու իր տեղը դաշնամուրային լավագույն ստեղծագործությունների շարքում:

<sup>12</sup> Հարությունյան Ա., Հուշեր, Երևան, 2000, էջ 84:

<sup>13</sup> Don Michael Randel, Arutiunian Alexander, “The Harvard concise dictionary of music and musicians”, Cambridge, 1999, p. 36.

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ 1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

### 3.1. Արամ Սաթյան. «Երեք պիես» և «Վեց բագատել»

20-րդ դարի երկրորդ կեսին ստեղծված հայ կոմպոզիտորների դաշնամուրային շարքերի ցանկում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում Արամ Սաթյանի «Երեք պիեսը» և «Վեց բագատելը»: «Երեք պիեսը» կոմպոզիտորի դաշնամուրային շարք գրելու առաջին փորձն է: Երկու շարքերն իրարից առանձին դիտարկելը միայ է, քանի որ «Երեք պիես» շարքը հիմք է դարձել «Վեց բագատելի» համար: «Երեք պիեսի» երրորդ համարը չնշին ծնափոխությունների ենթարկելով՝ կոմպոզիտորը դարձել է «Վեց բագատելի» երկրորդ պիես:

«Երեք պիեսը» Արամ Սաթյանը գրել է 1975 թվականին (հրատարակված է 1977թ. «Հայ կոմպոզիտորների դաշնամուրային պիեսներ» ժողովածուում): Ի սկզբանե այս շարքը բաղկացած էր 4 պիեսից: Սակայն մինչև տպագրության հանձնելը կոմպոզիտորը վերջին՝ 4-րդ պիեսը հանում է շարքից՝ գտնելով, որ այն չափազանց նորարարական է: Այդ պիեսում կոմպոզիտորը փորձել էր համատեղել ալետարիկան և դրեւկաֆոնիան: Պիեսը մինչ օրս հրատարակված չէ, սակայն պահպում է կոմպոզիտորի արխիվում:

Ստեղծագործական վաղ փուլում ուսանողական տարիներին ստեղծված «Երեք պիես» շարքը սերիալ տեխնիկայի նմուշ է: Հենց սերիան է միավորում երեք պիեսները: Մանրանվագների հիմքում 12 նոտայից բաղկացած չկրկնվող սերիան է:

Կոմպոզիտորն այստեղ սերիան բնորոշում է որպես սոստալ, պուանտիլիստական: Նա ձգուում է տոների, ինտերվալների, համահնչյունների առավելագույն կոնստրուկտիվ ինքնուրույնության, որպեսզի դրանցից յուրաքանչյուրը հավասար չափով կարողանա լուծել կոմպոզիցիոն, իմաստային և երաժշտական արտահայտչականության խնդիրները: Պիեսում կարելի է տեսնել պուանտիլիստական երաժշտությանը բնորոշ գրեթե բոլոր տարրերը.

- տարրեր տևողություն ունեցող «ճայնային կետիկների» պես հնչյուն-ների առկայությունը պարբերաբար ընդհատվում է նոյնքան տարրեր տևողություն ունեցող պատճանակով,
- առկա է նաև երաժշտական բաղկացուցիչ մասերի՝ «թեմաների» առավելագույն բաժանվածություն, մասնատվածություն, որն արտահայտվում է ուժիւստըների, տեմբրերի, շտրիխների մասնատվածության և տարաբնույթական միջոցով:
- շարքին ամենաբնորոշ պուանտիլիստական սերիականության հատկանիշն անընդհատ իրար հաջորդող երաժշտական ալիքների կամ «սառած» հնչյունների առկայումն է,
- պիեսներին բնորոշ է նաև ակտիվ մետրից հրաժարումը, կոմպոզիտորը ձգուում է կատարյալ ապամետրականության:

Թեև «Երեք պիեսը» Ա. Սաթյանը գրել է ստեղծագործական վաղ շրջանում, սակայն կոմպոզիտորը խստովանում է, թե գրելիս էլ հասկանում էր, որ սերիան պարփակում, կաղապարում է իրեն, և ապագան ազատ, ինտուիտիվ երաժշտությանն է պատկանում: Թերևս, դա է պատճառը, որ «Երեք պիեսից»

իինք տարի անց՝ 1978 թվականին գրված «Վեց բագատելում» կոմպոզիտորը հրաժարվում է սերիալ տեխնիկայից և գրում մողալ երաժշտության նմուշ: Այստեղ Ա. Սարյանը կարևորում է ինչպես միկրոլիառուցվածքները, այնպես էլ երաժշտական ընթացքի գարգացման տրամաբանությունը<sup>14</sup>:

«Վեց բագատել»-ը կոմպոզիտորի դաշնամուրային լավագույն և հաճախ կատարվող գործերի թվին է պատկանում: Գլխավոր միտքը, որը միավորում է շարքի պիեսները և թույլ տախիս այն շարք կոչել, ակնթարթի երկարություն ունեցող փոքրիկ և գեղեցիկ կերպարի ստեղծումն ու նրա անհետացումն է: Որպես կանոն, Ա. Սարյանը յուրաքանչյուր պիես կառուցում է մեկ երաժշտական տարրի շորջ, սակայն այն շատ չի գարգացնում՝ համարելով, որ պիեսը պետք է լինի կոկիկ և լակոնիկ: Յուրաքանչյուր պիես մյուսից տարբերվում է միայն իրեն բնորոշ առանձնահատուկ ոիրամիկ կամ պատկերային տարրի առկայությամբ: Պիեսներն իմպրովիզացիոն բնույթի են: Ինչպես հետինակն է ասում, «Վեց բագատել» գրելիս ձգտել է ստեղծել հետևյալ կերպարը. «Մարդն անցնում է հայելու կողոքով և մի հայացք նետելով՝ շարունակում իր ճանապարհը: Այդ գործողությունից մնում է որոշակի տպավորություն, անցած ակնթարթի զգացողություն, որն էլ փորձում եմ փոխանցել պիեսներում: Չէ՞ որ մենք ապրում ենք անցյալում: Մարդու աչքը ընկալում է մի քանի վայրկյան այն իրադարձությունից, որն արդեն եղել է, և մինչև ընկալում է եղածը, այն արդեն անցյալ է դառնում»<sup>15</sup>:

Եթե «Երեք պիեսում» Ա. Սարյանը որոշակի կախվածության մեջ է սերիայից, իր առջև նպատակ է դնում գրել հենց այդ տեխնիկայով ստեղծագործություն, ապա «Վեց բագատելում» կոմպոզիտորը շատ ավելի ազատ է: Պնդել, թե շարքն ավանդարդիստական է, թերևս սխալ է: Պիեսները մեղեդային են, կոմպոզիտորի նպատակը գեղեցիկ հնչյունային և կերպարային ոլորտ ստեղծելն է: Սերիալ, ալետատորիկ, սոնորային և այլ արտահայտչածները կիրառվում են որպես տեխնիկական հնարքներ, որոնք օգնում են ընդլայնել երաժշտական լեզվի հնարավորությունները, ստեղծել անհրաժեշտ կերպարային ոլորտ:

### 3.2. «Անհատականությունների կենդանի պատկերասրահ». Գագիկ Հովունց. «Տասը պիես-մոնոգրամ» դաշնամուրային շարքը

1989 թվականին Գ. Հովունցն ավարտեց իր ամենահետաքրքիր և յուրօրինակ ստեղծագործություններից մեկը՝ «Տասը պիես-մոնոգրամը» դաշնամուրի համար: Տասը պիեսից յուրաքանչյուրում կոմպոզիտորը բացահայտում է մեկ անձի կերպար: Յուրաքանչյուր պիես կառուցվում է հնչյունային լատինատառ խորհրդանշիշ-բանաձևերի հիման վրա: «Տասը պիես-մոնոգրամի» անուտացիայում Զարուիի Տեր-Ղազարյանը նշում է. «Գ. Հովունցը

<sup>14</sup>Արտեմյան Լ., Ասունալ գրեատնի սկզբունքները Արամ Սարյանի և Հրայր Մելիքյանի ստեղծագործություններում, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական վեցերորդ նստաշրջանի նյութեր, Երևան, 2012, էջ 164:

<sup>15</sup> Կոմպոզիտորի հետ անձնական գրույցից:

ստեղծում է անհատականությունների կենդանի մի պատկերասրահ»<sup>16</sup>: Դարձնելով այդ բանաձևները բոլոր մանրանվագների թեմաների հիմք՝ Գ. Հովոնցը վարդեսությամբ ստեղծում է դրամատոլոգիական կուր կառուց: Շարքի հերոսներն անձինք են, ովքեր եղել են կոմպոզիտորի կողքին կյանքի տարրեր ժամանակաշրջաններում, օգնել, սիրել, կարենեցել, կրթել են նրան, խթանել են ստեղծագործական աճը:

Տասը պիեսները ներկայացնում են ժամանակակից երաժշտական մի ամբողջ աստղաբոյլ, երաժշտների, ովքեր ժամանակին հայ երաժշտական հանրության սերուցքն էին, գեղարվեստորեն մտածող, ստեղծագործող մտավորականներ, Հայաստանի ողին, միտքը: Կոմպոզիտորը կարողանում է հնչող սիմվոլներ՝ երաժշտական անվան և ազգանվան սկզբնաւորեր օգտագործելով այդ «աշխարհը» և ստեղծագործ մրնուրութը դարձնել լսելի:

Դրամատուրգ Գ.Հովոնցը շարքում ստեղծում է եռամաս կառուցվածք, բաժանում շարքը երեք շրջանի՝ ենելով ստեղծագործության մասերի ավանդական հակադրման սկզբունքից: Այդ երեք շրջանները կոմպոզիտորի ընտանիքը, ուսուցիչները և գործընկերներն են: Որպես շարքի գագառնակես՝ Գ.Հովոնցն ընտրում է Ա-Բ-ա-բ-ա ինտոնացիան, որը պատկերում է հայ երաժշտարվեստի ամենավառ, ամենանշանավոր անհատականություններից մեկին՝ Առն Բաբաջանյանի՝ կոմպոզիտորի և անհատի, ով մարմնավորում է 20-րդ դարի Հայաստանի մի ամբողջ ժամանակահատված և ում «Վեց պատկեր» դաշնամուրային շարքը եղել է ժամանակաշրջանի հայ կոմպոզիտորների համար յուրատեսակ «փարոս»:

Գ.Հովոնցն իր առջև նպատակ է դնում պիեսներում մարմնավորել ընտրված հերոսներից յուրաքանչյուրի ներաշխարհը, մարդկային որակներն ու հատկանիշները: Երբ կոմպոզիտորը պատկերում է ստեղծագործ անհատի, օրինակ՝ կոմպոզիտորի, ընտրում է նրա արվեստին բնորոշ հնարքներ, արտահայտչածներ: Այդպես, օրինակ, Ալ.Հարությունյանի կերպարն ստեղծելու համար Գ.Հովոնցը գրում է պարային տրամադրությամբ պիես, իսկ Ա.Բաբաջանյանին պատկերում ֆակտորայի և հուզական տեսանկյուններից արտահայտիչ մանրանվագով: Գրիգոր Եղիազարյանը, Կարա Դոմբակը և Գայանե Զերոտարյանը Գ.Հովոնցի երեք ուսուցիչներն են եղել: Գ.Եղիազարյանի երաժշտական նկարագրության համար Գ.Հովոնցն ընտրում է «Նուբար-Նուբար» ժողովրդական երգը, քանի որ վերջինս իր «Սևան» բալետում օգտագործել է այդ մեղեդին՝<sup>17</sup>: Գ.Զերոտարյանին պատկերելու համար Գ.Հովոնցը դիմում է պոլիֆոնիկ գրեանձնին և մանրանվագը գրում ֆուգայի ծևու։ Գ.Զերոտարյանն այս մանրանվագում պատկերվում է ոչ միայն որպես պոլիֆոնիկ միշարք ստեղծագործությունների հեղինակ, այլև որպես Գ.Հովոնցի պոլիֆոնիայի խիստ ու բծախնդիր դասախոս: Կ.Դոմբակին բնորոշելու համար Գ.Հովոնցը

<sup>16</sup> Տեր-Ղազարյան Զ., Անուացիա Գագիկ Հովոնցի «Տասը պիես-մոնոգրամ դաշնամուրի համար» ստեղծագործության համար, Երևան, 1998, էջ 3:

<sup>17</sup> Հյուսնունց Շ., Բաբաջանյան Ա., Գագիկ Հովոնց. Ստեղծագործական դիմանկարի ուրվագծեր, Զրոյցներ կոմպոզիտորի հետ, Երևան, 2013, էջ 58:

նույնպես ընտրում է պոլիֆոնիկ գրելաձևի բարձրակետը՝ ֆուգան: Այս դեպքում նման ընտրությունը պետք է ընկալել որպես Կ. Դոմբակի համակարգված և մաքուր մտքի խորիրդանշիշ:

## ԵՇՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

✓ 1960-80թթ. ստեղծված դաշնամուրային շարքերին, ձևերի և արտահայտման լակոնիկության հետ մեկտեղ, բնորոշ է գունեղ և հոգական երաժշտական լեզուն:

✓ Մեկ այլ կարևոր հատկանիշ է երաժշտական հյուսվածքի մոտիվի շուրջ կառուցումը, ինչն, անշուշտ, տարբերվում է մինչդասական և դասական շրջանների մոտիվի կիրառումից: Եթե մինչ այդ երաժշտական կերպարը ստեղծվում էր մոտիվսերը միմյանց կցերով, իսկ երաժշտական գործողությունն իրագործվում էր դրանց զարգացման շնորհիվ, ապա 20-րդ դարի արվեստում և, մասնավորապես, մեր հետազոտության առարկա դարձած դաշնամուրային շարքերում տեսնում ենք հակառակ գործնթաց: Երաժշտական թեման փորձանում, նեղանում է և վերածվում մոտիվի: Մոտիվը փոխարինում է թեմային, իր վրա վերցնում թեմայի գործառույթը, ինչի արդյունքում հանգում ենք մոտիվային անկախության: Վերջինս ստեղծագործելու, դրամատուրգիական նոր հնարավորությունների խթան է դառնում:

✓ Դաշնամուրային շարքերի հեղինակները տարբեր կերպ են դիտարկում նաև ստեղծագործության ձևը: Մի կողմից՝ ակնհայտ է շարքի նեղացման, փորձացման միտումը, արտահայտման լակոնիկ մոտեցումը. մեր ընտրած ժամանակաշրջանում հայ կոմպոզիտորների շարքերը գիշավորապես բաղկացած են 5-7 մանրանվագից: Դա, թերևս, ունե միջին է, մանրանվագների մի քանակ, որի շնորհիվ չի կոտրվում ստեղծագործության ձևը: Մյուս կողմից՝ հանդիպում ենք նաև մեծաճավալ շարքերի, ինչպես օրինակ՝ Հրաչյա Մելիքյանի «Հերիաների աշխարհում» ստեղծագործությունը, որը բաղկացած է 24 մանրանվագից: Թերևս, վերը նշվածից խուսափելու համար <. Մելիքյանը շարքը կիսել էր երկու տեսրի, բացի այդ, ցանկության դեպքում, առաջարկել էր շարքի համարները կատարել առանձին:

✓ Շարքերին բնորոշ մյուս հատկանիշը շարք ժանրի միաձուլումն է այլ ժանրերի հետ, ինչպես օրինակ՝ պրեյութը, բագատելը և այլն: Արդյունքում ծնվում են ստեղծագործություններ, որոնք գրված են ազատ, իմայովվիզացիոն ոճով և կաղապարված չեն:

✓ Դաշնամուրային շարքերից գրեթե բոլորում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում դանդաղ մասերը: Դրանցում գրավիչ են ինչպես ազգային մելուսի հարստությունն ու գունեղությունը, այնպես էլ արտահայտման անմիջականությունը, խորաթափանցությունը: Շարքերի ֆինաները միշտ դրան նախորդող զարգացման օրինաչափ արդյունքն են: Ֆինաները հաղթական են, հաճախ՝ պարային բնույթի:

✓ Ընտրած ժամանակաշրջանի շարքերին հաճախ բնորոշ է նաև ոչ ծրագրային լինելը, սակայն, դրա հետ մեկտեղ՝ շարքերի համարներն ունեն վերնագրեր կամ բնարաններ:

✓ Շարքերն անհատական և ուրույն են նաև կատարողական տեսանկ-

յունից, այսինքն՝ կատարողական մեկնաբանման խնդրի դասակարգման հնարավորությունը բացառվում է: Ցուրաքանչյուր գործում կատարողը պետք է փորձի գոնել տվյալ ստեղծագրության կերպարային ոլորտին համապատասխան ուրույն կատարողական մեկնաբանություն:

✓ Վերջին և ամենակարևոր հատկանիշը դաշնամուրային շարքերում տվյալ ժամանակաշրջանին բնորոշ փորձարարությունն է, նորարարական արտահայտչամիջոցներին դիմելը, ինչը, սակայն, չի դառնում ճայրահեղ և ինքնապատակ: Նոր արտահայտչաձևների կիրառումը ոչ միայն չի կտրում ազգային հողից, այլև մերձեցնում է ազգայինին, միահյուսվում ավանդական արվեստի հետ՝ տարլվ նոր որակ, ստեղծելով ինքնատիպ դաշնամուրային շարքեր:

Ցավոք, հայ կոմպոզիտորների դաշնամուրային որոշ շարքեր լայն տարածում չեն գտել ոչ համերգային, ոչ էլ մանկավարժական պրակտիկայում, հայ և օտար երաժշտակերներն ու երաժիշտ-կատարողները երթեմն ծանոթ չեն դրանց երաժշտությանը, մինչդեռ դրանցից շատերն արժանի են ուշադրության: Անհրաժեշտ է, որ այդ ստեղծագրությունների իրենց հաստատուն տեղը գտնեն մեր դաշնակահարների նվազագանկերում, ընդգրկվեն երաժշտական դպրոցների ավագ դասարանների, երաժշտական քոլեջների, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի, Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ծրագրերում:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. **Մարգարյան Ա.**, Առն Բարաջանյան. «Վեց պատկեր». ԿԱՆԹԵՂ. գիտական հոդվածներ, 2 (75), 2018, էջ 237-251:
2. **Մարգարյան Ա.**, Հրայր Մելիքյանի «Հերիախների աշխարհում» դաշնամուրային շարքը, ԿԱՆԹԵՂ. գիտական հոդվածներ, 4 (69), 2016, էջ 240-256:
3. **Մարգարյան Ա.**, «Անհատականությունների կենդանի պատկերասրահ». Գագիկ Հովունցի «Տասը պիես-մոնոգրամ» դաշնամուրային շարքը, ԿԱՆԹԵՂ. գիտական հոդվածներ, 3 (64), 2015, էջ 228-251:
4. **Մարգարյան Ա.**, Գագիկ Հովունց. 12 պրեյուդ դաշնամուրի համար, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական իններորդ նստաշրջան (14 նոյեմբերի, 2014), Նստաշրջանի նյութեր, Երևան, 2015, էջ 250-267:
5. **Մարգարյան Ա.**, Արամ Սարգսյանի «Երեք պիես» և «Վեց բազատել» դաշնամուրային շարքերը, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական յոթերորդ նստաշրջան, նվիրվում է Տիգրան Չուխանջյանի ծննդյան 175-ամյակին (19-21 հոկտեմբերի, 2012), Նստաշրջանի նյութեր, Երևան, 2013, էջ 66-79:
6. **Մարգարյան Ա.**, Ռուբեն Սարգսյանի «Հայկական գրաֆիկա» դաշնամուրային շարքը, Երիտասարդ արվեստաբան-1, նվիրվում է ՀԱԱ հիմնադրման 70-ամյա հոբեյանին, գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2013, էջ 120-131:

7. **Մարգարյան Ա.**, Ալեքսանդր Հարությունյան. «Վեց տրամադրություն», Երիտասարդ հայ արվեստարանների գիտական Վեցերորդ նստաշրջան (26-27 նոյեմբերի, 2011), Նախադրանի նյութեր, Երևան, 2012, էջ 196-206:
8. **Մարգարյան Ա.**, Լևոն Չառչյան. Յոթ պրեյսուր դաշնամուրի համար, Երիտասարդ հայ արվեստարանների գիտական հինգերորդ նստաշրջան (2-3 դեկտեմբերի, 2010), Նախադրանի նյութեր, Երևան, 2011, էջ 175-185:

**МАРГАРЯН АНАИТ ЕРВАНДОВНА**  
**ФОРТЕПИАННЫЕ ЦИКЛЫ АРМЯНСКИХ КОМПОЗИТОРОВ**  
**(1960-1980-е годы)**

Диссертация посвящена изучению фортепианных циклов армянских композиторов 1960-1980-х годов. Особое внимание уделено:

- Изучению стилистических особенностей фортепианных циклов;
- Изучению процесса европеизации фортепианных циклов армянских композиторов 1960-1980-х годов, который происходил без отрыва от национальной музыки;
- Введению в научный оборот свидетельств и комментариев композиторов, что поможет исполнителю глубже понять структуру, предысторию и специфику произведения;
- Необходимости вовлечения фортепианных циклов армянских композиторов в исполнительскую и педагогическую сферы.

В диссертации впервые:

- Изучены фортепианные циклы армянских композиторов, написанные в 1960-1980-х гг.
- Выявлена специфика музыкального языка и формообразования фортепианных произведений.
- Даны жанровая и стилистическая характеристики каждого цикла.
- Изучены метроритмическая организация и фактура.
- Было раскрыто умение армянских авторов с помощью фортепиано «рисовать музыку», изображать сочные, яркие образы, картины, создавать самобытный колорит.
- Особое внимание было уделено музыкально-теоретическому анализу каждого цикла.

**Материалом для исследования** послужили созданные в 1960-1980-х гг. наиболее интересные и знаменательные с точки зрения композиторского замысла фортепианные циклы, в их числе: “Шесть картин” Арно Бабаджаняна (1965), “Двенадцать прелюдий” (1966) и “Десять пьес-монограмм” (1989) Гагика Овунца, “Три пьесы” (1966) и “Шесть багателей” (1986) Арама Сатяна, “В мире сказок” Рачья Меликяна (1970), “Армянские барельефы” Гегуни Читчян (1972), “Семь прелюдий” Левона Чаушяна (1973), “Армянская графика” Рубена Саргсяна (1973) и “Шесть настроений” Александра Арутюняна (1976).

Диссертация состоит из Введения, трех глав (Глава первая - “1960-е годы”, Глава вторая - “1970-е годы”, Глава третья - “1980-е годы”), выводов и списка использованной литературы.

В результате исследования были сделаны следующие выводы:

➤ Созданным в 1960-1980-х годах фортепианным циклам, наряду с лаконичностью форм и выражения, свойственна яркость и эмоциональность музыкального языка, интенсивность музыкальной ткани.

➤ Важнейшим признаком является построение музыкальной ткани вокруг мотива, что, безусловно, отличается от построения мотива в доклассический и классический периоды. Если ранее музыкальный образ создавался присоединением мотивов друг к другу, а музыкальное действие осуществлялось благодаря их развитию, то в искусстве 20-го века и, в частности, в исследуемых нами произведениях – фортепианных циклах, наблюдается обратный процесс. Музыкальная тема уменьшается, сужается и преобразовывается в мотив. В результате мотив заменяет тему, берет на себя функцию темы, что приводит к независимости мотива. Он становится стимулом для творчества, новых драматургических возможностей.

➤ Авторы исследуемых нами фортепианных циклов по-разному рассматривают форму произведения. С одной стороны, очевидна тенденция к сужению, уменьшению цикла, лаконическому подходу: в выбранный нами период циклы армянских композиторов состоят главным образом из 5-7-и миниатюр-пожалуй, золотая середина, количество, которое позволяет не ломать форму произведения). С другой стороны – встречаются крупномасштабные циклы, такие, как цикл "В мире сказок" Рачья Меликяна, который включает в себя 24 миниатюры. Свой цикл Р.Меликян разделил на две тетради, кроме того, предложил, при желании, номера в цикле исполнять отдельно.

➤ Другой особенностью, характерной для циклов рассматриваемого нами периода, является слияние жанра цикла с другими жанрами, такими как прелюдии, багатели, и др. В результате появляются произведения, написанные в свободном, раскованном импровизационном стиле.

➤ Почти во всех фортепианных циклах особое место занимают медленные части. Они привлекают как изобилием и яркостью национального мелоса, так и непосредственностью выражения, глубиной проникновения. Финалы циклов-всегда закономерный результат предыдущего развития, всегда победны, часто – танцевального характера.

➤ Циклам рассматриваемого нами периода часто присущ отход от программности, однако вместе с тем номера в них имеют названия или эпиграфы. Очевидно, что циклы, ставшие предметом нашего исследования, индивидуальны и своеобразны также с точки зрения исполнительства, то есть исключается возможность классификации исполнительской интерпретации. Исполнитель в каждом из произведений должен постараться найти особый исполнительский путь, который бы соответствовал образной среде данного произведения.

➤ Не менее важно и то, что в циклах, исследуемых нами очевидно, свойственное своему времени экспериментаторство, обращение к новаторским средствам выражения. Тем не менее, у авторов, к произведениям которых мы обратились в исследовании, экспериментаторство не носит экстремального характера, не становится самоцелью. Применение новых средств выражения не только не отрывается от национальной почвы, но еще более приближает к национальному, сплетается с традиционным искусством, придает новое качество, в результате чего были созданы оригинальные по форме и содержанию фортепианные циклы.

К сожалению, некоторые фортепианные циклы армянских композиторов не получили широкого распространения ни в концертной, ни в педагогической практике; армянские и иностранные любители музыки и музыканты-исполнители часто не знают эту музыку, а между тем, многие из произведений, ставшие предметом нашего изучения, достойны внимания. Мы надеемся, что циклы, к которым мы обратились в нашей работе займут достойное место в концертных программах армянских пианистов, а также будут включены в обязательные учебные программы старших классов музыкальных школ, музыкальных колледжей, Ереванской государственной консерватории имени Комитаса, Армянского государственного педагогического университета имени Хачатура Абояна.

### MARGARYAN ANAHIT

### THE PIANO CYCLES BY ARMENIAN COMPOSERS (the 1960s-1980s)

The thesis comprehensively studies the piano cycles of the 1960s-1980s by Armenian composers. The priority is given to:

- Study of stylistic peculiarities of the piano cycles;
- Identification of the role and significance of performing piano cycles in educational practice and concert activity;
- Examination of pieces from the perspective of performance;
- Introduction of the composers' evidences and comments to academic circles to help performers to better perceive the structure, the background story and the specifics of the work;
- Necessity to include the piano cycles by Armenian composers into performing and pedagogical practices.

The thesis for the first time:

- Studied the piano cycles of the 1960s-1980s by Armenian composers;
- Defined their role in the development of Armenian piano music;
- Identified the specifics of the musical language and formation of piano pieces;
- Defined the genre and stylistic characteristics;
- Studied the metro-rhythmical pattern and structure.

The **research was conducted based on** the most interesting piano cycles of noteworthy composing concept, created in the 1960s-1980s., which included: "Six Pictures" by Arno Babajanyan (1965), "Six Moods" by Alexander Harutyunyan, "Twelve Preludes" (1966) and "Ten Pieces-Monograms" (1989) by Gagik Hovunts, "Armenian High Reliefs" by Geghuni Chitchyan (1972), "Seven Preludes" by Levon Chaushyan (1973), "Armenian Graphics" by Ruben Sargsyan (1973), "Three Pieces" (1966) and "Six Bagatelles" (1986) by Aram Satyan, "In the World of Tales" by Hrachya Melikyan.

The thesis consists of Introduction, three chapters (Chapter One—"The 1960s"; Chapter Two—"The 1970s"; Chapter Three—"The 1980s"), Conclusions and List of Literature.

The results of the research revealed the following:

➤ The piano cycles, written in the 1960s-1980s, are characterized by laconism of shape and expression, as well as brightness and emotionality of musical language, intensity of musical texture.

➤ A major peculiarity is structuring musical texture around the motif, which is indubitably different from motif structuring principles in the pre-classical and classical periods. Formerly, musical images were created by attaching motifs one to another, and the musical action was realized through their evolution. In the XX century art, particularly in the subject of our research-the piano cycles-an opposite process is observed. The musical theme is diminishing, narrowing and transforming into a motif. Thereby, the motif substitutes for the theme, takes over the function of the theme, thus making it independent and encouraging new dramaturgical resources for creation.

➤ The composers of the piano cycles under research have different views as to the shape of the composition. On the one hand, a tendency to narrowing and diminishing the cycle, to laconism in expression (in the period under review, the cycles by Armenian composers mainly consist of 5-7 miniatures-the golden mean that allows the composer not to break the shape of the work) is apparent, while on the other, there are such large-scale cycles as Hrachya Melikyan's "In the World of Tales", embracing 24 miniatures. To avoid the above mentioned, H. Melikyan divided the cycle into two books and went even further-proposed that the pieces be performed separately, if the pianist so chose.

➤ Yet another feature, characteristic of the cycles of said period, is fusion of the genre *cycle* with such genres as *preludes*, *bagatelles*, etc. Such compositions are written in a free, unfettered improvisational style.

➤ Almost in all the examined piano cycles, slow parts are given a special place. They attract by abundance and brightness of national tunes, the ingeniousness of expression, the depth of permeation. The finals of the cycles are always an expected consequence of the previous development, always victorious, often in a dance style.

➤ The cycles of said period are often devoid of programmatic titles or epigraphs.

➤ The cycles under review are individual and unique from the performing perspective, i. e. the possibility to classify the interpretation of the performance is excluded. In each work, the performer must try and find a separate manner of performance that fits the figurative environment of the given composition.

➤ The last and most important feature to be underscored is the aspiration to experiment, to employ innovative means of expression, peculiar to the period in question. For the composers, whose works were analyzed, this tendency did not become an overwhelming end in itself. Far from cutting off from the national soil, the novel means of expression bring closer to the national, entwine with traditional art, impart new quality, enable the creation of original piano cycles.

Sadly, enough, some of the piano cycles by Armenian composers have not been properly promoted to make part of concert and pedagogical practices. Armenian and foreign music lovers and music performers are very often unfamiliar

with that music, while many pieces are undoubtedly worth attention. It is essential that the above-mentioned compositions take their steady place in the list of pieces, announced by our pianists for their concerts, be incorporated in the educational curricula for the senior grades of music schools and colleges, at the Yerevan Komitas State Conservatory, the piano department of the Kh. Aboyan Armenian Pedagogic University.